

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի տրամադրած

դրամաշնորհի շրջանակներում

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի Ջրածորի հնավայրում կազմակերպած

«Երիտասարդ հնագետների միջազգային ամառային դպրոցի»

աշխատանքների

Հաշվետու ժամանակաշրջան՝ հուլիսի 11-17 2023 թ.

Ամառային դպրոցի պատասխանատու՝ ԳԱԱ ՇՀՀ-ի գլխավոր տնօրեն՝ պ.գ.թ. Բ. Վարդանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ, սույն թվականի հուլիսի 11-17-ին Շիրակի մարզի Ջրածորի բրոնզ-երկաթեդարյան հնավայրն ուսումնասիրող նոր արշավախմբի հիման վրա, կազմակերպեց «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ»:

Ջրածորի հնագիտական ամառային դպրոցը Հայաստանի և Ջավախքի բուհերի հայ ուսանողներին հնարավորություն տվեց ստանալ գործնական գիտելիքներ հնագիտությունից և հարակից մի շարք այլ գիտաճյուղերից:

Ամառային հնագիտական դպրոցին մասնակցեցին Հայաստանից՝ Վանաձորի պետական համալսարանի և Վրաստանից՝ Սամցխե-Ջավախքի համալսարանի պատմության բաժինների ուսանողները:

Ամառային հնագիտական դպրոցի մասնակիցները այցելության առաջին օրը հանաչողական այցեր կատարեցին Գյումրու պատմական թաղամասերում, Գյումրու պատմության թանգարանում, որի ընթացքում ուսանողներին ներկայացվեցին Շիրակի մարզի հնագիտության հիմնահարցերը:

2023թ. հուլիսի 11-ից ամառային դպրոցի ուսանողների մասնակցությամբ սկսվեցին Ջրածորի բրոնզ-երկաթեդարյան ամրոցի պեղումները: Աշխատանքների առաջին օրն ուսանողները սովորեցին պեղավայր դնելու մեթոդները, ծանոթացան հնագիտական աշխատանքային գործիքներին, սեփական ուժերով բացեցին երկաթեդարյան կառույցի պատեր: «Երիտասարդ հնագետների միջազգային ամառային դպրոց»-ի 3-րդ աշխատանքային օրը ուսանողներն աշխատեցին Ջրածորի ամրացված երկրորդ դարավանդի մուտքի և աշտարակի մոտ դրված պեղավայրում, ուր հայտնաբերեցին խեցեղենի բեկորներ, կենդանական ոսկորներ և օբսիդիանից իրեր:

«Դպրոց»-ը 4-րդ աշխատանքային օրը հյուրընկալեց Պաշտպանության ծառայություն ՊՈԱԿ-ի գլխաշխատող, հեռուստադաշնի Հասանիկ Սիմոնյանին և վերականգնման լաբորատորիայի վարիչ Տիգրան Զաֆյանին:

Հ. Սիմոնյանը մարդաբանական մեթոդների կիրառմամբ ուսանողներին ներկայացրեց հեռուստադաշնության ուսումնասիրության սկզբունքները, իսկ վերականգնման լաբորատորիայի վարիչ Տիգրան Զաֆյանը ամառային դպրոցի մասնակիցներին հնավայրում պեղված խեցեղենի բեկորներով ներկայացրեց խեցեղենի վերականգնման մեթոդները:

Հնագիտական ամառային միջազգային դպրոցի հիմնադրող աշխատանքային օրն ուսանողները շարունակեցին Ջրածորի ամրացված դարավանդի և պարսպի պեղումները: Պեղավայրում ուսանողներին մասնակցությամբ տեղի ունեցան փորձարարական հնագիտության երկու դասընթացներ: Հնագետ, «Էքսբլոնի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի «Կարմիր բլուր» մասնաճյուղի վարիչ Իվան Սեմյանը ներկայացրեց բրոնզի ստացման հնագույն տեխնոլոգիան՝ բրոնզեդարյան մետաղագործության նույնական տեխնոլոգիաների կիրառմամբ: Գիտափորձի ընթացքում պատրաստվեց բրոնզից զարդ:

Զուգահեռ, ֆաբրիկայի տեխնոլոգիաների վերականգնող վարպետ Նիկոլայ Ցոյը ներկայացրեց օբյեկտների մշակման սկզբունքները, բույսերի միջոցով քելերի ու հանգույցների պատրաստման եղանակները: Գիտափորձի ընթացքում պատրաստվեցին նետալափներ և նիզակի ծայրեր:

Աշխատանքային վերջին օրը մասնակից ուսանողներն այցելեցին Մարմաշենում ուրարտական քաղաք Արգիշի Ա-ի թողած սեպագիր արձանագրության տարածք և միջնադարյան վանական համալիր:

Մարմաշենի վանական համալիրում հնագետ՝ հնագույն տեխնոլոգիաների վերականգնող մասնագետ Իվան Սեմյանն ուսանողներին ներկայացրեց ֆաբրիկայի, բրոնզեդարյան և ժամանակակից երաժշտական գործիքների կատարման եղանակները՝ վարգան, ալլոս և դուդուկ:

«Ներխառնարդ հնագետների միջազգային ամառային դպրոցը» ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից կազմակերպված առաջին հայ-վրացական նմանատիպ նախագիծն էր: Այն ոչ միայն կարևոր էր հնագիտական գիտելիքների ձեռքբերման և հետագա կիրառման տեսակետից, այլև ամրապնդեց Հայաստան-Վրաստան մշակութային և կրթական կապերը:

Ամառային դպրոցի աշխատանքները լայնորեն լուսաբանվեցին տեղական լրատվամիջոցների կողմից, ինչպես նաև ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի կայքէջում (<http://www.shirakcenter.sci.am>) և Ֆե էջում (<https://www.facebook.com/ShantGyumriTV/videos/1309106716692324/>):

պ.գ.թ. Բ. Վարդանյան

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝

Ա. Հայրապետյան





